ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№	Հաճախ տրվող հարցեր	Պատասխան
1.	Նշել քանի օրացուցային օր շուտ պետք է իրականցնել ամրագրումը:	15 օր շուտ
2.	Քանի՞ հոգանոց սենյակներ ունեք և ի՞նչ հարմարություններով են դրանք:	Ունենք 2 և 4-5 անձի համար նախատեսված քոթեջներ՝ լոգարանով,անհրաժեշտ պարագներով և ջեռուցման համակարգերով ապահովված:
3.	Արդյո՞ք ռեզորթը տրամադրում է տրանսպորտային ծառայություն Երևանից:	Ոչ, նման ծառայություն չի գործում:
4.	Եթե ոչ, արդյո՞ք ունեք առաջարկվող գործընկեր կազմակերպություն կամ նախընտրելի փոխադրող:	Կարող ենք նմանատիպ ծառայություններ կատարող կազմակերպությունների տվյալներ տալ:
5.	Ի՞նչ ժամանցային հնարավորություններ կան ռեզորթում (օրինակ՝ լողավազան, սպա, թենիս, խաղեր, միջոցառումներ):	Ունենք թենիսի սեղան, վոլեյբոլ և բադմիտոն խաղալու համար նախատեսված տարածք, սեղանի խաղեր, խաղահրապարակ:
6.	Արդյո՞ք կա բուժկետ կամ շտապ օգնության հասանելիություն:	Տարածքում կա բուժկետ:8-10 կմ հեռավորության վրա տեղակայված է հիվանդանոց, ինչպես նաև կա շտապօգնության հասանելիություն:
7.	Ի՞նչ անվտանգության կանոններ են գործում տարածքում:	Տարածքն ամբողջովին պարսպապատ է, տեսահսկվում է և հսկվում անվտանգության աշխատակցի կողմից:
8.	Արդյո՞ք ռեզորթն ունի Wi-Fi կամ այլ կապի միջոցներ ամբողջ տարածքում:	Տարածքում կա Wi-Fi
9.	Ինչպիսի՞ սնունդ է ներառված փաթեթում (եթե կա նախաճաշի մենյու կամ նկարագրություն ապա խնդրում ենք տրամադրել), ինչպես նաև որ ժամանակահատվածում /ըստ սեզոնի/:	Փաթեթը ներառում է նախաճաշ, որը լինում է կամ շվեդական կամ անհատական մատուցմամբ: Նախաճաշը հագեցած է լինում կաթնամթերքով, առողջարար սննդատեսակներով, մրգերով, բանջարեղենով, տնական պահածոներով, խմորեղենով, բազմատեսակ տաք ոտեստներով և աղցաններով: Համապատասխանեցված է ցանկացած քիմքի:

10.	Արդյո՞ք ամեն օր մենյուն փոխվում է, թե՞ ֆիքսված է:	Գրեթե ամեն օր փոխվում են տաք ուտեստների աղցանների տեսականին,ինչպես նաև ավելացվում են նոր և թարմ սեզոնային մրգեր և խմորեղեն:
11.	Ի՞նչ ժամերին է մատուցվում նախաճաշը:	Նախաճաշը մատուցվում է 9:30-11:00
12.	Արդյո՞ք առկա է պահք պահող անձանց համար հատուկ մենյու:	Ճաշացանկը ներառում է տարբեր ուտեստները, ինչպիսիք են նաև պահք պահող անձանց համար համապատասխան տարբերակներ:
13.	Ավտոկայանատեղի առկա է թե ոչ՞	Այո, առկա է:
14.	Անկողնային պարագաներ ներառված են սենյակներում:	Այո, ներառված են:
15.	Հիգիենայի պարագաներ ներառված են սենյակներում:	Այո, ներառված են:
16.	Խնդրում եմ նշել մուտքի և ելքի ժամանակահատվածը:	Մուտք՝ 14:00 Ելք՝12:00
17.	Սենյակներում առկա են արդուկ, թեյնիկ և ֆեն:	Այո, առկա են:
18.	Ընտանի կենդանիների մուտքը արգելված է թե ոչ:	Միայն փոքր չափսի կենդանիներ կարող ենք հյուրընկալել:
19.	Սենյակներում հյուրեր ընդունել հնարավոր է թե ոչ:	Այո, հնարավոր է:
20.	Խնդրում եմ նշել ամրագրման չեղարկման համար ամենաուշ ժամկետը և այն խախտելու պարագայում ինչ հետևանք է ունենալու:	Չեղարկման դեպքում պետք է տեղեկացնել նվազագույնը 8 օր շուտ:
21.	Մինչև քանի տարեկան երեխան է անվճար և այդ տարիքից բարձր երեխաների համար ինչ պայմաններ են գործում և կեցության և սննդի համար:	Մինչև 6 տարեկան երեխաները սպասարկվում ենք անվճար, 6-11 տարեկան երեխաները՝3000 դրամ, 11- և բարձր տարիքի երեխաները՝ 6000 դրամ:
22.	Խնդրում եմ նշել արդյոք առկա է տրանսպորտային ծառայություն և նշել արժեքը դեպի Դենդրապարկ:	Տարածքում տաքսիներ են գործում, միջինում 500 դրամ է կազմում:
23.	Խնդրում եմ նշել արդյոք կան հատուկ պայմաններ հաշմանդություն ունեցող անձանց համար:	Տարածքում կան թեքահարթակներ: